«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝	**Հետադարձ կապի ազդեցությունը սովորողի առաջադիմության վրա**
Հետազոտող ուսուցիչ՝	**Արմավիրի մարզի «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասավար՝ Միլենա Ասլանյան**
Մենթոր ուսուցիչ՝	**Արմինե Անտոնյան**

ԱՐՄԱՎԻՐ-2022

Բովանդակություն

Ներածություն 3

Հետադարձ կապի ազդեցությունը սովորողի առաջադիմության վրա 4

Եզրակացություն 13

Գրականության ցանկ 14

Ներածություն

Ուսուցման գործընթացում կարևոր նշամակություն ունի ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապը: Հետադարձ կապը ուսուցման գործընթացի կարևոր բաղադրիչն է: Այնուամենայնիվ, մենք գիտենք, որ ուսուցիչից շատ ժամանակ է պահանջվում՝ հանձնարարությունները ստուգելու և աշակերտներին արդյունքները տրամադրելու համար: Ձևավորող գնահատում ապահովող գործիքները ավտոմատացնում են հետադարձ կապ տրամադրելու և ստանալու գործընթացը և զգալիորեն խնայում ստուգման ժամանակը: Ավելին, նրանց կանոնավոր օգտագործումը զարգացնում է աշակերտների ինքնուրույնություն և ուսման համար պատասխանատվության զգացողություն: Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ինչպիսիք են, համագործակցության ուսուցումը, նախագծային մեթոդը, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովվում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից: Օտար լեզվի դասավանդման խնդիրները ներկայումս առավել ակնառու են դառնում, երբ կարևորվում են սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական նախաձեռնությունը, ազատ զարգացումը: Սովորողի մեջ գիտելիքի, կարողությունների, հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների ձեռք բերման պահանջ ձևավորելու կարևոր պայման է դրական խթանը, իսկ օտար լեզվի ուսումնասիրության պարագայում կարևորագույն պայմանը՝ երկխոսությունն է: Հետևաբար սովորողների առաջադիմության ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հետադարձ կապի ապահովումը: Մյուս հույժ կարևոր մեթոդներից է հետադարձ կապը, առանց որի հնարավոր չէ դասավանդումը նպատակակետին հասցնել: Բայց և հարկ է չմոռանալ դասավանդման սուբյեկտիվ գործոնը և.ս. ի վերջո, դասավանդումը սուբյեկտիվ գործընթաց է, որը ենթադրում է «տեղեկատվական սցենարների» սուբյեկտիվ մշակում-ներկայացում:

Հետադարձ կապի ազդեցությունը սովորողի առաջադիմության վր

Հետազոտությունը կատարվել է ավանդական դասաձևի վրա:Երբ առաջին դասարանում հնչյուն տառը ուսուցանելիս սովորեցինք հնչյուն տառը,ցուցադրեցինք դիդակտիկ նյութեր և կարողացանք գրել հնչյուն տառ:Բոլոր փուլերը ավարտելուց հետո,հաջորդ դասին,երբ կատարեցի հետադարձ կապ հնչյուն տառի ուսուցման շուրջ,հասկացա որ արդյունքը գոհացուցիչ չէր:Հետադարձ կապի արդյունքը որպեսզի լինի գոհացուցիչ,դասը պետք է լինի գունագեղ,խաղերով հագեցած:Հաջորդ հնչյուն տառը սովորեցինք խաղի միջոցով:Դասարան էր բերվել《Կ》հնչյուն

տառին համապատասխանող կենդանի կրիա,որին երբ դուրս բերեցինք արկղից,ոտին կախված էր մեր հնչյուն տառը:Մի քիչ էլ գույներ հաղորդելով,շեղվեցինք թուղթ և գրիչ տարբերակից,հնչյուն տառը սկսեցինք գրել սովորել ավազագրությամբ:Հետադարձ կապն երբ երկրորդ անգամ կատարեցի արդյունը գոհացուցիչ էր:

Դասն ունի իր առանձնահատկությունները, և ի տարբերություն մյուս առարկաների՝ որպես հիմնական նպատակ առաջ է քաշվում սովորողների հաղորդակցական ունակությունների ձևավորումը: Որո՞նք են առարկայի առանձնահատկությունները: Առաջին. լեզուն (մայրենի, թե՝ օտար) ծառայում է որպես շփման, շրջապատող իրականության վերաբերյալ տեղեկատվության ընդունման և փոխանցման միջոց: Եվ առարկայի ուսուցումը դպրոցում պետք է դիտել հենց այս տեսանկյունից: Երկրորդ. օտար լեզվի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ծանոթանալ օտարալեզու երկրի մշակույթին, ընդարձակել մտահորիզոնը, տիրապետել առարկաների, երևույթների, նրանց կապերի ու հարաբերությունների մասին մտքեր արտահայտելու միջոցներին: Այդ միջոցներն արտահայտվում են երկու ձևով՝ գրավոր և բանավոր: Հենց սրանք էլ դրվում են օտար լեզվի ուսուցման հաղորդակցական հմտությունների ձևավորման հիմքում: Երրորդ. լեզուն, որպես շփման միջոց, պետք է

մշտապես պահել, այսինքն՝ միշտ պատրաստ ցանկացած իրավիճակում գործածելու համար: Այդ իսկ պատճառով սովորողի կողմից յուրացված նյութը պետք է մշտապես կիրառվի պրակտիկայում՝ իր բանավոր և գրավոր ձևերով: Օտար լեզվի ուսուցումը միայն քերականական գիտելիքների հաղորդում չէ: Ներկայումս յուրաքանչյուր սովորող հետաքրքրված է օտար լեզվի պրակտիկ իմացությամբ: Հաղորդակցվելու ընթացքում սովորողը պետք է հնարավորություն ունենա ազատ արտահայտել իր մտքերն ու զգացմունքները, չվախենա քննադատվելու կամ սխալվելու վտանգից, լինի բոլորի ուշադրության կենտրոնում: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող սովորողները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Դաս վարող ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող: Ուսուցիչը պետք է կարողանա դասի ընթացքում՝

- ապահովել երկխոսության իրավիճակ (քննարկվող նյութի մատչելիություն, հետաքրքրություն, բարյացակամ, հանդուրժող, փոխհամաձայնության, փոխօգնության մթնոլորտ).
- ապահովել կոլեկտիվ գործունեություն (անհատական, զույգերով, խմբերով).
- խթանել սովորողի հետաքրքրվածությունը իր գործունեության արդյունքով.
- ապահովել անձնային կողմնորոշմամբ շփումներ (հաշվի առնելով սովորողի հետաքրքրությունները, անձնական և հոգեբանական առանձնահատկությունները).
- սահմանել յուրացվող նյութի խելամիտ ծավալ (ըստ սովորողների տարիքային խմբի և պատրաստվածության): Սովորողները դասարանում տարբերվում են բանավոր խոսք կառուցելու, կարդալու, գրելու, ստեղծագործելու, հաղորդակցվելու իրենց ունակություններով, ուստի պետք է ուսուցման գործընթացում կիրառել երեխայակենտրոն մոտեցում[1]:

Ուսուցչի և սովորողի համատեղ աշխատանքը և ստեղծագործական միջավայրում արարումը տալիս են իրենց առատ պտուղները: Միակողմանի կապը վերածվում է եռակողմանիի. ուսուցիչ-սովորող, սովորող-ուսուցիչ, սովորող-սովորող: Առաջադրանքը գնահատելիս պետք է հաշվի առնել ոչ միայն օտար լեզվի ճիշտ կիրառումը, այլ նաև սովորողների ստեղծագործելու, յուրահատուկ մոտեցումներ դրսևորելու հմտությունները[2]: Մյուս կարևոր պայմանը՝ դասը վառ, գունագեղ, գրավիչ դարձնելն է յուրաքանչյուր սովորողի համար: Իմ դասերի ընթացքում ես աշխատում եմ բոլոր սովորողներին, առանց բացառության, հաղորդակից դարձնել ուսուցանվող նյութին: Այդ

[1] Щуркова Н. Е. и др., Новые технологии воспитательного процесса, Москва, 1993, էջ 131-133:
[2] Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2010, էջ 121:

հաղորդակցումը կարող է ունենալ ամենատարբեր ձևեր. խաղ, հրահրում, հումոր, խթանում[3]:

Ավագ դպրոցում դասավանդումը նպատակաուղղված է սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիաի զարգացմանը, նրանց՝ լեզվակրթության ընթացքում առկա դժվարությունները ինքնուրույնաբար հաղթահարելու հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև խոսքային կարողությունների զարգացմանը նպատակաուղղված առավել փոխներգործուն մեթոդների ու ռազմավարությունների յուրացմանը: Միաժամանակ, ավագ դպրոցում օտար լեզուների ուսուցումը կոչված է էլ ավելի ընդլայնել սովորողների հաղորդակցական մշակույթն ու համագործակցելու կարողությունները, որոնք դյուրացնում են նրանց մուտքը համաշխարհային հանրություն և արդյունավետ գործելու հնարավորություններ ընձեռում: Չէ որ ուսուցման ժամանակ օտար լեզուն օգտագործվում է մի կողմից որպես ուսուցման/ուսումնառության նպատակ, (օրինակ, հումանիտար հոսքում մայրենի լեզվի եւ գրականության հետ մեկտեղ օտար լեզուն կոչված է նպաստելու հետագա բանասիրական կրթության հիմքերի ստեղծմանը), մյուս կողմից՝ որպես միջոց այլ առարկաներ ուսումնասիրելու համար(օրինակ, ֆիզիկայի, քիմիայի, պատմության, աշխարհագրության եւ այլ առարկաների մասին օտարալեզու նյութեր հավաքել), ինչը հնարավոր է մասնագիտական տեքստերի ուսումնասիրման միջոցով:

Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ օտար լեզու ների ապագա ուսուցիչները հնարավորություն չունեն պատշաճ կերպով ամրապնդելու իրենց լեզվական գիտելիքները, քանի որ ուսումնամանկավարժական պրակտիկային հատկացվող ժամաքանակը բավարար չէ: Ապագա ուսուցիչները հաղթահարում են բազում լեզվական, հոգեբանական, մանկավարժական, մասնավորապես՝ մեթոդական բնույ թի դժվարություններ: Օտար լեզուների ուսուցչի մեթոդական կոմպետենտության ձևավորման հիմնախնդիրը արդիական է եղել դեռևս նախորդ դարի սկզբում, քանի որ անկախ այն բանից ինչ մեթոդներով կամ սկզբունք ներով են դասավանդում, ուսուցիչների անձնային որակ - ներն առանց քային դերակատարություն ունեն դասանյութի մատուցման, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, լեզվանյութի մտապահման և տարբեր խոսքային իրադրություններում կիրառման տեսանկյունից: Օտար լեզուների ուսուցչի պատրաստման, վերապատրաստման գործընթացում

[3] Колесникова И. А.. Основы технологической культуры педагога: Научно-методическое пособие для системы повышения квалификации работников образования., СПб: ДРОФА, САНКТ-ПЕТЕРБУРГ, 2003, էջ 56:

ձևավորվել են տարբեր մեթոդաբանական մոտեցումներ՝ ինտեգրատիվ-ռեֆլեքսիվ, համատեքստային, կոմպենտենտային և այլն[4]:

Կոմպետենտային մոտեցումը ինչ-որ տեղ ոչ թե փոխարինում է գիտելիք-կարողություն-հմտություն մոտեցումը, այլ լրացնում է այն: Ինչպես նշում է Ի. Ա. Զիմնայան. «Կոմպետենտությունը կոնկրետ իրադրությունում հաջող գործողություն է»[5]: Օտար լեզվի ուսուցչի կրթությունը նոր բովանդակություն է ստանում կոմպետենտային մոտեցման տեսանկյունից, քանի որ ներկայաց նում է կրթական գործընթացը ուսումնական, ճանաչողական, խաղային գործունեության համատեքստում: Ըստ այդմ՝ առաջին պլան է մղվում մասնագիտական կոմպետենտություն հասկացությունը, որի բաղադրիչներն են ըստ Լ.Մ.Միտինայի՝ «գործունեության, հաղորդակցական և հասարակական կոմպետենտությունները»: Ն. Վ. Կուզմինան առանձնացնում է դասավանդողի հատուկ և մասնագիտական իրազեկությունները, հաշվի առնելով դասավանդվող առարկայի առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ, նույն հեղինակը առանձնացնում է ուսուցչի մեթոդական, հասարակական-հոգեբանական, տարբերակված-հոգեբանական, աուտոհոգեբանական կոմպետենտությունները: Օտար լեզուների ուսուցչի մասնագիտական և մեթոդական կոմպետենտության ձևավորման գործընթացում կարևոր է հաշվի առնել թե՛ ուսումնական, թե՛ արտաուսումնական գործոնները, ուսուցիչների մտածելակերպը, տվյալ կրթական հանրության ավանդույթները, հաղորդակցության մոդելները, տեղեկատվության փոխանցման միջոցներն ու տեխնոլոգիաները, դասավանդողների և սովորողների փոխհարաբերությունների բովանդակությունը, իրավական դաշտը, նրանց փոխ հարաբերությունների կարգավորման մեխանիզմները: Պատահական չէ, որ մանկավարժները ուսուցչի մեթոդական և մասնագիտական կոմպետենտությունը դիտարկում են հաղորդակցական, տեղեկատվական, կարգավորող, ինտելկտուալ կոմպետենտությունների համակարգում:

Առանցքային նշանակություն ունեն ապագա ուսուցչի համար վերլուծական կարողությունները թե՛ լեզվաբանական, թե՛ մեթոդական մակարդակներում: Նրանք պետք է կարողանան համադրել լեզվաբա նական և մեթոդական վերլուծության ընթացակարգերը, քանի որ դրանք կոնկրետ դասի, պլան-կոնսպեկտի, անգամ ծրագրերի վերլուծության կարևոր պայման են: Մանկավարժաները խնդիր են դնում շարունակաբար բարձրացնել ապագա ուսուցչի մասնագիտական կոմպետենտության մակարդակը թե՛ բուհում՝ ուսումնառության տարիներին, թե՛ հետագա աշխատան քային գործունեության

[4] Шепель В. М., Производство и педагогика, Москва, 1969, էջ 11:

[5] Հ. Անդրեասյան, Օտար լեզուների ուսուցչի կոմպենտենտություն, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու: Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2015, էջ 254:

ընթացքում: Փաստորեն, օտար լեզուների ուսուցչի մեթոդական և մասնագիտական կոմպետենտության հիմնախնդիրը դիտարկվում է շարունակական կրթության շրջանակներում: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռում կիրառել նոր, ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ, նոր մեթոդաբանական դիրքերից մոդելավորել օտար լեզուների ուսուցման գործընթացը: Մասնավորապես, կարևորվում են ստեղծագործական, քննադատական մտածողության կարողությունների ձևավորման և զարգացման տեխնոլոգիաները: Իր սեփական գործունեությունը վերլուծող, ճիշտ գնահատող, իր մասնա գիտական և մեթոդական գիտելիքները շարունակաբար և հետևողականորեն զարգացնող ուսուցիչը միայն կարող է հասնել ցանկալի արդյունքների:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք նշել, որ սովորողների առաջադիմության բարձրացման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն կարող է ունենալ հետադարձ կապի ապահովումը:

Հետադարձ կապն ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է: Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների գործողություններին՝ ուսուցչի և մյուս սովորողների անդրադարձի: Հետադարձ կապ ապահովելիս ուսուցիչը պետք է սվորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող, բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, բացահայտել բացթողումները և բարելավել ուսումնառության արդյունքը:

Այսպիսով՝ հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Հետադարձ կապը լինում է երկու տեսակի՝ արտաքին և ներքին:

Արտաքին հետադարձ կապն ապահովում է ուսուցիչ - սովորող, սովորող - ուսուցիչ կամ սովորող – սովորող կապերը: Ուսուցիչն ու սովորողները միմյանց կատարած գործողությունների վերաբերյալ իրականացնում են համապատասխան վերլուծություններ՝ փոխադարձաբար անդր ադառնալով աշխատանքում եղած ձեռքբերումներին և թերություններին:

Ներքին հետադարձ կապն ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկատմամբ կատարած ինքնաանդրադարձն է: Ե՛վ ուսուցիչը, և՛ սովորողը կարիք ունեն ինքնաանդրադարձ վերլուծության: Ուսուցիչը ստացված արդյունքները վերլուծելով՝

բացահայտում է իր գործողությունների ստացված և չստացված պահերը, դրանց հիման վրա պլանավորում հետագա գործողությունները, իսկ աշակերտը իր գործողությունները վերլուծելով՝ բարելավում է իր ուսումնառությունը:

Հետադարձ կապի իրականացման միջոցները:

Բանավոր զրույց. երբ վերլուծությունները և շտկումները կատարվում են բանավոր քննարկման միջոցով: Հարցուպատասխանի, տարբեր հարցերի վերհանման միջոցով բանավոր քննարկվում են այն գործողությունները, որոնք բարելավման կարիք ունեն, ինչու չէ, նաև հնարավոր է նորից ընկերների կամ ուսուցչի օգնությամբ անդրադառնալ այն կետերին, որոնք կօգնեն վերացնել աշխատանքի թերությունները:

Գրավոր մեկնաբանություն. երբ վերլուծություններն ու բարելավման առաջարկներն իրականացվում են գրավոր կերպով:

Գծապատկերներ. Երբ ուսուցիչը հետադարձ կապը տալիս է գծապատկերների միջոցով: Այս միջոցը բարձրացնում է տեղեկատվության յուրացման արդյունավետությունը, քանի որ ուսուցչի՝ սովորողին կամ սովորողներին ուղղված խոսքը ուղեկցվում է նշաններով և գծանկարներով, որոնք կարող են լինել նախապես պայմանավորված նշաններ, սիմվոլներ, հուշող պատկերներ և այլն:

Տեսագրություն և ձայնային հաղորդագրություն. երբ որակյալ տեսագրությամբ կամ ձայնագրությամբ կարճ և դիպուկ վերլուծություն կամ մեկնաբանություն է տրվում աշխատանքին[6]:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն արդեն անդառնալի կերպով մուտք են գործել ուսուցման բոլոր գործընթացներ, հետևաբար այս հնարավորությունը նույնպես պետք է օգտագործել արդյունավետորեն: Տեղեկույթը, վերլուծությունները սովորողի համար դառնում են ավելի հետաքրքիր և արդիական, երբ իրենց հետ շփվում են, այսպես կոչված՝ «ընդունելի միջոցներով»:

Արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար անհարժեշտ է պահպանել հետևյալ սկզբունքները:

Անհատական. երբ սովորողը հասկանում է, որ ուղղորդող և շտկող հարցերն ուղղված են հենց իրեն, այլ ոչ ամբողջ դասարանին: Սովորողը հասկանում է, որ հարցադրումները և ուղղորդումը չեն կրում ձևական բնույթ, այլ իրականացվում են հենց իր համար:

Օբյեկտիվ և նրբանկատ. Հետադարձ կապի միջոցով պետք է մանրամասն նկարագրել սովորողի գ

[6] Սուքիասյան Մ., Մանկավարժական տեխնոլոգիաների դերը ուսուցման գործընթացում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.2 (12), Երևան, 2016, էջ 90:

ործողությունները և բացառել հուզական գնահատականը նրա կատարած քայլերին: Սովորողի համար բավականին տհաճ է և տեղին չէ, երբ իրեն քննադատում կամ պարսավում են այս կամ այն սխալի համար: Բայց եթե նրա նկատմամբ օբյեկտիվ են, այսինքն՝ վերլուծում են իր աշխատանքը, այլ ոչ թե իրեն՝ մեղադրում կամ հեգնում, նա դրական և պատրաստակամ է մոտենում վերլուծական աշխատանքին:

Պատճառներ և բացատրություն. սովորողի կատարած քայլերի վերլուծությունը (ոչ թե ուղղումը), թույլ է տալիս նրան ինքնուրույն հասկանալ և շտկել իր կատարած բացթողումները: Հետադարձ կապն ամբողջովին կրում է ուսուցանող բնույթ, ուստի կարևոր է ոչ թե ուղիղ ձևով սովորողին իր սխալները ցույց տալը, այլ հարցերի և պարզաբանումների միջոցով նրան օգնելը, որ դրանք ինքնուրույն գտնի:

Ճիշտ տեղին և ժամանակին. Հետադարձ կապը պետք է տալ այն ժամանակ, երբ հարցերի ճշգրտումը տեղին է և ժամանակին : Այս սկզբունքի իմաստը հետադարձ կապի ժամանակավրեպ չլինլու մասին է: Ուսուցիչը պետք է հնարավորություն տա սովորողին ժամանակին իր սխալները գտնելու և շտկելու, քանի դեռ նա ամբողջովին գործընթացի մեջ կենտրոնացած է: Ինչպես ասում են՝ երկաթը տաք-տաք են ծեծում:

Մոտիվացիայի ապահովում. Հետադարձ կապի մեջ պետք է շեշտադրել սովորողի ձեռքբերումները՝ դրանով ապահովելով նրա դրական տրամադրվածությունը և կենտրոնացվածությունը աշխատանքի վերլուծության վրա:

Կարճ և հետաքրքիր. Յուրաքանչյուր սխալի համար տրամադրել կարճ տեղեկություն՝ համեմել ով խաղային կամ այլ հետաքրքիր տարրերով:

Արդյունավետ հետադարձ կապի հնարներ

Հնար 1. «Սենդվիչ»



Հնար 2. «Չափանիշներ, սխալներ, արդյունք»

Հետադարձ կապի սկզբում հիշեցնել այն կանոնը կամ չափանիշը, որին կարևոր էր հետևել առաջադրանքը կատարելիս և դա չկիրառելու պատճառով սովորողը թույլ է տվել սխալներ: Այնուհետև մեկնաբանել, թե որտեղ է նա խախտել կանոնը: Սովորողի հետ քննարկել, թե ինչպես է կանոնի կամ չափանիշների կիրառումն ազդում արդյունքի վրա: Այդ տեղեկատվության շնորհիվ սովորողը հասկանում է, թե ինչը պետք է փոխի և ինչու:

Հնար 3. «Ձեռքբերում, ուսումնառություն, փոփոխություն»

Հետադարձ կապի սկզբում ուսուցիչը սովորողին տեղեկացնում է նրա ձեռքբերումների մասին: Միասին քննարկելով՝ որոշում են, թե սովորողը որտեղ է թույլ տվել բացթողումներ: Վերլուծության և քննարկման միջոցով գտնում են ցանկալի արդյունքի ուղիները:

Սովորողը կատարում է համապատասխան փոփոխությունները և ճշգրտում իր քայլերը: Այս բոլոր հնարները կարելի է ոչ միայն կիրառել ուսուցիչ – սովորող կապում այլ նաև կարելի է պարզեցնել և հարմարեցնել սովորող – սովորող համագործակցության համար: Նշենք այն անհերքելի միտքը, որ սովորում է նա, ով սովորեցնում է: Հետևաբար, արդյունավետ հետադարձ կապ անհրաժեշտ է ապահովել նաև սովորողների միջև:

Հետադարձ կապը կարելի է համարել հաջողված, եթե այն համապատասխանում է հետևյալ երեք կանոններին.

Ընկալում. երբ սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր ուժեղ կողմերի և նրանց զարգացման հնարավոր ուղիների մասին:

Ընդունում. երբ սովորողը ստացած տեղեկատվությունը ընդունում է և ներքին համաձայնության գալիս դրանց հետ:

Հեռանկար. երբ սովորողն ունի ցանկություն ուղղելու սեփական սխալները, և նա արդեն կատարել է առաջին քայլերն իր գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Ընդհանրացնելով կարող ենք ավելացնել, որ հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության անբաժանելի մասն է: Որքան այն արդյունավետ է, որքան շեշտադրվում են սովորողների ձեռքբերումները և իրականացվում է աշխատանքի պատշաճ վերլուծություն, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ սովորողները շարունակաբար կբարելավեն իրենց առաջադիմությունը:

Շատ կարևոր է որ սովորողն իրեն հարգված և կարևորված զգա, հասկանա, որ իր կրթությունը ձևական բնույթ չի կրում: Արդյունավետ հետադարձ կապն ավելի կարևոր է, քան ուսուցումը»:

Եզրակացություն

Այսպիսով, լեզվի ուսուցումը միայն քերականական գիտելիքների հաղորդում չէ: Ներկայումս յուրաքանչյուր սովորող հետաքրքրված է օտար լեզվի պրակտիկ իմացությամբ: Հաղորդակցվելու ընթացքում սովորողը պետք է հնարավորություն ունենա ազատ արտահայտել իր մտքերն ու զգացմունքները, չվախենա քննադատվելու կամ սխալվելու վտանգից, լինի բոլորի ուշադրության կենտրոնում: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող սովորողները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Դաս վարող ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող: Հետևաբար, սովորողների առաջադիմության ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հետադարձ կապի ապահովումը: Մասնավորապես, հետադարձ կապն ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է: Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների գործողություններին՝ ուսուցչի և մյուս սովորողների անդրադարձի: Հետադարձ կապ ապահովելիս ուսուցիչը պետք է սվորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող, բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, բացահայտել բացթողումները և բարելավել ուսումնառության արդյունքը: Հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից: Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է սովորողի վիճ ակի ճիշտ հայտորոշմամբ: Հայտորոշման արդյունքում կիրառվող հետադարձ կապը նպաստում է ունեցած տեղեկության հիմա ն վրա ս ովորողի վիճակի և ուսուցման կազմակերպման բարելավմանը: Այն շարունակական և անընդհատ գործընթաց է: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գործնական կամ գրավոր աշխատանքների արդյունքներ իքննարկման միջոցով:

Գրականության ցանկ

1. Հ. Անդրեասյան, Օտար լեզուների ուսուցչի կոմպենտենտություն, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական

հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու: Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2015, էջ 254:
2. Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2010, էջ 121:
3. Սուքիասյան Մ., Մանկավարժական տեխնոլոգիաների դերը ուսուցման գործընթացում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.2 (12), Երևան, 2016, էջ 90:
4. Колесникова И. А.. Основы технологической культуры педагога: Научно-методическое пособие для системы повышения квалификации работников образования., СПб: ДРОФА, САНКТ-ПЕТЕРБУРГ, 2003, էջ 56:
5. Шепель В. М., Производство и педагогика, Москва, 1969, էջ 11:
6. Щуркова Н. Е. и др., Новые технологии воспитательного процесса, Москва, 1993, էջ 131-133: